

նայ ներսէս Ե. Կթղ.էն (1843—1857). (Արարս 1903. էջ 320). 1843ին Ս. Յակոբի տպարանէն կը հրատարակէ Մկրտչեան Մաշտոցը ձեռագիրներու համեմատութեամբ եւ այս հրատարակութեան կը կցէ Յայտարարքիւն վերնագրով Գեորգ Երզնկացի վրդին (ԺԴ դար) մկրտութեան մասին գրած Խրատականին համառօտութիւնը. նոյն Մաշտոցին ինչ ինչ մասերու տարբերութիւններուն համար ՊԿ. Աստուածատուր Կ. Պոլսեցի (1841-44) կը մերմէ նոյն Մաշտոցի գործածութիւնը, մանրամասնութիւնները տեսնել (ՊՏՄ. Զիլիկիտեան. էջ 118). Զաքարիա պտրք. ունի Բարոզգիրք մը (անտիպ), ուր 1857ին Եւզոկիացի Մհտ. Կարապետ Ընկուզեան գրած է հետեւեալ յիշատակարանը. «Բարոզգիրքս այս հեղինակեալ ի Զաքարիա պատրիարքէ եւ հետեւաբար սրբագրութեամբ կանոնաւորեալ (1853) ի Տէր Դաւիթ եպս.է Գէորգեան Կարնեցոյ, յորմէ աստ օրինակեցաւ ձեռամբ Մ. Կարապետ Ընկուզեան Եւզոկիացոյ»: Զաքարիա ՊԵ. վախճանած է 1846 Մայիս 7. իր տապանագիրն է հետեւեալը. «Ի Կողբ գեղջէ Տարոնոյ, Զաքարիա պտրք. Եէմի. Տէր Պետրոսեան:

Մահ և գերեզման

Գերէք զամենայն

գերեցիք և զիս

Ի յիմ վաթսուն ամ.

Սուրբ պատարագի

Պատճառ մատուցման

Ի կենդանակիր Փրկչին գերեզման.

Տէր Յս. Քս. վասն քո թաղման

Զթաղեալս վերածեա՛ ջրումդ հանգստեան:

1846 Մայիս 7».

ԶԱՔԱՐԻԱ ՊԿ. ՎԱՆՅԻ (Երկիցս).— Աշկ. Կարկառեցի Պետրոս Կթղ.ի, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. Գրիգոր Պարոնտէր պտրք.ի ժամանակ, 1634 ի Ծոպակիկի. (Դարակաղցի. էջ 364—65). 1612 ին Ն. Մեղքեսեդեկ Կթղ.էն (* 1626 Կամենից) ի Հոռոնց տես. յետոյ Կ. Պոլիս. Զաքարիայի պատրիարքական պաշտօնավարութեան և այլ վարչական խնդիրներու և գործերու մասին տեսնել (Դարակաղցի. էջ 180). Զաքարիա պտրք. կը վախճանի 1640 ին եւ կը թաղ-